ԵԴ/0538/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Է.Մկրտչյան

ՀՀ վերաքննիչ քրեական դատարան,
նախագահող դատավոր՝ Ս.Համբարձումյան
դատավորներ՝ Լ.Հովհաննիսյան
Ռ.Պապոյան

27 նոյեմբերի 2026 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ Արմեն Խաչիկի Ղահրամանյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2022 թվականի հուլիսի 19-ին, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ գործող քրեական օրենսգիրք) 344-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է թիվ 16132522 քրեական վարույթը:

2022 թվականի դեկտեմբերի 21-ին Արմեն Խաչիկի Ղահրամանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ նախկին քրեական օրենսգիրք) 243.1-րդ հոդվածի 1-ին մասով, և 2022 թվականի դեկտեմբերի 22-ին նրան մեղադրանք է ներկայացվել:

Նախաքննության մարմնի՝ 2022 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ Ա.Ղահրամանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել բացակայելու արգելքը:

2023 թվականի մարտի 21-ին քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (այսուհետ՝ նաև Առաջին ատյանի դատարան):

2. Առաջին ատյանի դատարանը 2023 թվականի հունիսի 6-ին կայացրել է արդարացման վերդիկտ: Առաջին ատյանի դատարանի՝ նույն օրվա դատավճռով ճանաչվել է Ա.Ղահրամանյանի անմեղությունը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 243.1-րդ մասով առաջադրված մեղադրանքում՝ իրեն մեղսագրվող արարքը չկատարելու հիմքով: Ա.Ղահրամանյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ բացակայելու արգելքը, վերացվել է:

3. Դատախազի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) 2023 թվականի նոյեմբերի 23-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի հունիսի 6-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին:

4. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Վարդապետյանը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը Վճռաբեկ դատարանի՝ 2024 թվականի հունիսի 7-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

5. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա, քանի որ ձեռք բերված ապացույցների ոչ պատշաճ հետազոտման ու գնահատման հետևանքով Ա.Ղահրամանյանը ներկայացված մեղադրանքում արդարացվել է՝ վերագրվող արարքի քրեական հակաիրավականությունն ապացուցված չլինելու հիմքով:

5.1. Այսպես, բողոքաբերը փաստարկել է, որ Առաջին ատյանի դատարանը հանգել է սխալ հետևության՝ գտնելով, որ Ա.Ղահրամանյանն իրազեկված չի եղել իր՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման մասին: Մասնավորապես, դատարանի եզրահանգումն առ այն, որ Ա.Ղահրամանյանը տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման վերաբերյալ թվով չորս որոշումների մասին փոստային եղանակով չի ծանուցվել, անհիմն է, քանի որ դատարանում հետազոտված ապացույցներով, մասնավորապես՝ զննություն կատարելու մասին արձանագրությամբ, վկաներ Գոհար Շահբազյանի, Ժուլետա Ներիսիյանի և հենց Ա.Ղահրամանյանի ցուցմունքներով հիմնավորվել է, որ վերոնշյալ որոշումներն առաքվել են Ա.Ղահրամանյանի մշտական բնակության վայր, ստացվել են վերջինիս կնոջ կողմից, ով էլ դրանք տարբեր եղանակներով՝ անձամբ կամ այլ անձանց միջոցով, փոխանցել է ամուսնուն:

Բողոքի հեղինակը նշել է, որ դատարանում հետազոտված ապացույցներով հիմնավորվել է, որ Ա.Ղահրամանյանի կինը, թեկուզև բանավոր կերպով, ամեն դեպքում ամուսնու կողմից լիազորված է եղել ստանալ ամուսնու վերաբերյալ փոստային առաքանիները:

Բողոքաբերն ընդգծել է, որ Ա.Ղահրամանյանը նույնպես չի հերքել իր նկատմամբ կայացված վարչական իրավախախտումների վերաբերյալ որոշումներ ստանալու հանգամանքը, նշել է նաև, որ ստացել է բազմաթիվ տուգանք նշանակելու որոշումներ, որոնցից մի մասը նաև վճարել է, սակայն չի հիշում, որ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման մասին որոշում ստացած լինի կամ հնարավոր է՝ ստացել է, սակայն չի բացել և ծանոթացել, իսկ դատարանի հարցին, թե կարող է դատարան ներկայացնել նշված որոշումներից որևէ մեկը՝ ծրարով փակ վիճակում, տվել է ժխտողական պատասխան:

5.2. Բողոքի հեղինակը նշել է, որ քրեական գործում կան նաև ապացույցներ, որոնք հաստատում են Ա.Ղահրամանյանի կողմից տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման վերաբերյալ իր կողմից մշտապես շահագործվող բջջային հեռախոսահամարին թվով չորս կարճ հաղորդագրության միջոցով ծանուցվելու հանգամանքը:

Բողոքի հեղինակը փաստել է, որ Ա.Ղահրամանյանը դատարանում ցուցմունք է տվել, որ տեղյակ է եղել, որ իր տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի համար տարեկան հատկացված բալերը զրոյացել են, որի վերաբերյալ ևս կարճ հաղորդագրություն է ուղարկվել Ա.Ղահրամանյանի կողմից շահագործվող հեռախոսահամարին, ինչը նույնպես հերքում է Ա.Ղահրամանյանի պատճառաբանություններն այն մասին, որ ինքը հեռախոսին ուղարկված կարճ հաղորդագրությունները չի կարդում և որևէ կասեցման մասին տեղյակ չէ:

6. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Առաջին ատյանի դատարանի՝ 2023 թվականի հունիսի 6-ի դատավճիռն անփոփոխ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի որոշումը, և կայացնել դրան փոխարինող դատական ակտ՝ մեղադրյալ Ա.Ղահրամանյանին մեղավոր ճանաչել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում՝ նշանակելով համաչափ պատիժ, կամ վարույթը փոխանցել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

7. Ա.Ղահրամանյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն արարքի համար, որ նա. *«(...) [Տ]րանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված լինելու պայմաններում վարել է տրանսպորտային միջոցը:*

Այսպես.

*Արմեն Խաչիկի Ղահրամանյանը, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը վեց ամիս ժամկետով՝ 2021 թվականի հոկտեմբերի 27-ից մինչև 2022 թվականի ապրիլի 27-ը, կասեցված լինելու պայմաններում, 2022 թվականի մարտի 18-ին՝ ժամը 04:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Իսակովի պողոտայում վարել է «Օպել» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենան, ինչը հայտնաբերվել է փվյալ տարածքում ծառայություն իրականացնող ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի 2-րդ վաշտի կրտսեր պարեկ Գրիգոր Ավոյանի կողմից, ինչի կապակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 8180113947 արձանագրությունը (...)»*[1]:

8. Վարչական տույժ նշանակելու մասին 2021 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2113599111 որոշման համաձայն՝ 2021 թվականի սեպտեմբերի 29-ին՝ ժամը 15:08-ին «Օպել» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայով կատարված իրավախախտման համար Ա.Ղահրամանյանի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցվել է 6 (վեց) ամիս ժամկետով, իսկ տվյալ որոշումն ուժի մեջ է մտնում հանձնվելու (հանձնված համարվելու) օրվան հաջորդող օրը: Թիվ 2113599111 որոշման ծանուցագիրը հասցեագրվել է Ա.Ղահրամանյանին, և ստորագրությամբ հանձնվել է 2021 թվականի հոկտեմբերի 29-ին[2]:

Վարչական տույժ նշանակելու մասին 2021 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2113598670 որոշման համաձայն՝ 2021 թվականի սեպտեմբերի 29-ին՝ ժամը 14:16-ին «Օպել» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայով կատարված իրավախախտման համար Ա.Ղահրամանյանի տրանսպորտային միջոցներ վարելու

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 43-44:
[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 5-6:

իրավունքը կասեցվել է 6 (վեց) ամիս ժամկետով, իսկ տվյալ որոշումն ուժի մեջ է մտնում հանձնվելու (հանձնված համարվելու) օրվան հաջորդող օրը: Թիվ 2113598670 որոշման ծանուցագիրը հասցեագրվել է Ա.Ղահրամանյանին, և ստորագրությամբ հանձնվել է 2021 թվականի հոկտեմբերի 29-ին[3]:

Վարչական տույժ նշանակելու մասին 2021 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2113597168 որոշման համաձայն՝ 2021 թվականի սեպտեմբերի 29-ին՝ ժամը 11:31-ին «Օպել» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայով կատարված իրավախախտման համար Ա.Ղահրամանյանի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցվել է 6 (վեց) ամիս ժամկետով, իսկ տվյալ որոշումն ուժի մեջ է մտնում հանձնվելու (հանձնված համարվելու) օրվան հաջորդող օրը: Թիվ 2113597168 որոշման ծանուցագիրը հասցեագրվել է Ա.Ղահրամանյանին, և ստորագրությամբ հանձնվել է 2021 թվականի հոկտեմբերի 29-ին[4]:

Վարչական տույժ նշանակելու մասին 2021 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 2113634617 որոշման համաձայն՝ 2021 թվականի հոկտեմբերի 6-ին՝ ժամը 15:05-ին «Օպել» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենայով կատարված իրավախախտման համար Ա.Ղահրամանյանի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցվել է 6 (վեց) ամիս ժամկետով, իսկ տվյալ որոշումն ուժի մեջ է մտնում հանձնվելու (հանձնված համարվելու) օրվան հաջորդող օրը: Թիվ 2113634617 որոշման ծանուցագիրը հասցեագրվել է Ա.Ղահրամանյանին, և ստորագրությամբ հանձնվել է 2021 թվականի նոյեմբերի 1-ին[5]:

9. Ա.Ղահրամանյանի վերաբերյալ կազմված վարչական իրավախախտման մասին արձանագրության և դրանով կայացված թիվ 8180113947 որոշման համաձայն՝ 2022 թվականի մարտի 18-ին՝ ժամը 04:00-ի սահմաններում, Ա.Ղահրամանյանը տրանսպորտային միջոց վարելու իրավունքը կասեցված վիճակում Երևան քաղաքի Իսակովի պողոտայում վարել է «Օպել» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցը[6]:

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 7-8:
[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 9-10:
[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 11-12:
[6] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 3:

10. Ճանապարհային ոստիկանության ծառայության պետի տեղակալի գրության համաձայն՝ Ա.Ղահրամանյանի վարորդական իրավունքը կասեցնելու վերաբերյալ թիվ 2113599111, 2113598670, 2113597168, 2113634617 որոշումները փոստային ծառայության կողմից հանձնվել են հասցեատիրոջը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի համաձայն՝ համարվել են պատշաճ ծանուցված և, որպես հետևանք, ուժի մեջ մտած: Միաժամանակ, Ա.Ղահրամանյանը www.roadpolice.am հարթակում գրանցված է որպես տրանսպորտային միջոցներ շահագործող անձ, չի բաժանորդագրվել ճանապարհային ոստիկանության ծանուցումների էլեկտրոնային համակարգում առկա եղանակներից որևէ մեկին, սակայն 37477576770 հեռախոսահամարին ուղարկվել են SMS կարճ հաղորդագրություններ՝ վերջինիս վարորդական իրավունքի կարգավիճակի (կասեցնելու) և տուգանային միավորները սպառվելու վերաբերյալ[7]:

11. Քննում կատարելու մասին արձանագրության համաձայն՝ «Ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային ռեգիստր»-ում Արմեն Ղահրամանյանի տվյալներով կատարված որոնման արտատպված արդյունքի զննությամբ պարզվել է, որ որպես Ա.Ղահրամանյանի տրանսպորտային միջոց վարելու իրավունքի կասեցման սկիզբ նշված է 2021 թվականի հոկտեմբերի 27-ը, իսկ որպես ավարտ՝ 2022 թվականի ապրիլի 27-ը:

«Հարթակից օգտվելու և էլեկտրոնային եղանակով ծանուցումների վերաբերյալ» Ա.Ղահրամանյանի տվյալներով կատարված որոնման արտատպված տեղեկանքի զննությամբ պարզվել է, որ RK187094 վարորդական վկայականով, ***_**_**_** հեռախոսահամարով 2021 թվականի մայիսի 30-ին կցում է կատարվել նշված հարթակին: 2021 թվականի հոկտեմբերի 28-ին նշված հեռախոսահամարին ուղարկվել է թվով 3 հաղորդագրություն՝ «Արմեն Խաչիկի Ղահրամանյան վարորդական վկայականը կասեցվել է» բովանդակությամբ, նույնաբովանդակ հաղորդագրություն է ուղարկվել նշված հեռախոսահամարին նաև 2021 թվականի նոյեմբերի 3-ին[8]:

[7] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 19:
[8] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 30-31:

12. Տեղեկատվության պահանջ քննչական գործողությամբ «ՄՏՍ-Հայաստան» ՓԲ ընկերությունից ստացված տվյալների զննության արձանագրության համաձայն՝ 077-57-67-70 հեռախոսահամարը հաշվառված է Արմեն Ղահրամանյանի կնոջ՝ Գոհար Շահբազյանի անվամբ: 2021 թվականի հոկտեմբերի 28-ին՝ ժամը 02:10:32-ին, 02:10:34-ին, 02:10:35-ին 077-57-67-70 բջջային հեռախոսահամարին մուտքային հեռախոսազանգ (կամ ՍՄՍ, հատուկ նշում, առկա չէ) է ստացվել «Roadpolice» բաժանորդից՝ տեղակայումը բացակայում է: Նշված հեռախոսահամարից նույն օրը՝ ժամը 02:29:01-ին, ելքային զանգ է կատարվել, տեղակայումը՝ Սևան քաղաք: 2021 թվականի նոյեմբերի 3-ին՝ ժամը 02:10:00-ին «Roadpolice» բաժանորդից կատարվել է զանգ (ուղարկվել է հաղորդագրություն)՝ տեղակայումը բացակայում է, որից հետո հեռախոսահամարին մուտքային և ելքային հեռախոսազանգեր են կատարվել շուրջ 5 ժամ անց՝ 07:22:22-ին և 07:40:00-ին, տեղակայումը նշված է Սևան քաղաք:

13. Մեղադրյալ Ա.Ղահրամանյանի նախաքննական ցուցմունքի համաձայն՝ թիվ 2113599111, 2113598670, 2113597168, 2113634617 որոշումների փոստային առաքման կտրոնների վրա առկա ստորագրություններն իրենը չեն, դրանք կնոջ ստորագրություններին է նմանեցնում: Կինն իրեն որևէ բան չի հայտնել վերոնշյալ որոշումները ստանալու վերաբերյալ: Շատ են եղել դեպքեր, երբ իր անունով եկած ակտերը կինն է ստացել, հավանաբար մտածել է, որ դրանք նույնպես ակտեր են և իրեն չի հայտնել: Հնարավոր է՝ այդ ժամանակ ինքը դիրքերում եղած լինի, քանի որ աշխարհազորայինների կազմակերպությանն է աջակցում, կամավոր հիմունքներով մշտապես գնում է, հավաքված օգնությունը տանում դիրքեր:

13.1. Մեղադրյալ Ա.Ղահրամանյանի նախաքննական լրացուցիչ ցուցմունքի համաձայն՝ երբեմն կինն իրեն զանգել է, հայտնել, որ փոստատարն իրենց տուն է եկել, իրեն նամակներ է բերել, ինքն էլ հորդորել է, որ ստանա դրանք: Նաև հայտնել է, որ մեղավորությունն իրենն է, քանի որ փաստացի արդեն քննության ընթացքում համոզվել է, որ թե փոստային ծառայության միջոցով, թե հեռախոսահամարով իրեն ծանուցում է կատարվել, և միայն իր ոչ հետևողականության, անուշադրության արդյունքում, չի իմացել, որ վարորդական վկայականը կասեցված է[9]:

[9] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 81-83:

13.2. Մեղադրյալ Ա.Ղահրամանյանի՝ 2023 թվականի հունիսի 6-ի դատաքննական ցուցմունքի համաձայն՝ եղել են նամակներ, որ ստացել է, սակայն ժամանակ չի ունեցել դրանք կարդալու, տեղյակ չի եղել, որ տրանսպորտային միջոցներ վարելու իր իրավունքը կասեցված է, իրեն կանգնեցրել են պարեկները 2022 թվականի մարտի 18-ին և այդ ժամանակ պարեկից է տեղեկացել, որ իր տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված է: Միգուցեև իրեն զանգահարել են, ինքը դիրքերում է եղել, պատասխանել են իր զանգերին, իրեն տեղյակ չեն պահել: Կոնկրետ վարորդական իրավունքի կասեցման վերաբերյալ նամակ չի ստացել: Տասնհինգ և ավելի տարի է օգտագործում է ***-**-**-** բջջային հեռախոսահամարը, ունի նաև երկրորդ հեռախոսահամար:

Մեղադրյալ Ա.Ղահրամանյանը նշել է, որ նախքան 2022 թվականի մարտի 18-ը տեղյակ չի եղել, որ իր տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված է: Այդ ժամանակ իր բջջային հեռախոսի էկրանը կոտրված է եղել, ինքը պատասխանել է միայն հեռախոսազանգերին, հազիվ համարներն է տեսել, այդ մասին տեղեկացրել է նաև քննիչին:

Նաև հայտնել է, որ որոշումները, որոնք ստացել է, բայց չի կարդացել, տանն են, չի կարող ասել՝ կարող է ներկայացնել դատարան, թե ոչ[10]:

14. Վկա Գոհար Շահբազյանի նախաքննական ցուցմունքի համաձայն՝ Ա.Ղահրամանյանի անվամբ հասցեագրված թիվ 2113598670, 2113597168, 2113634617 որոշումների փոստային առաքման կտրոնների վրա առկա ստորագրություններն իրենն են: Չի հիշում, թե վերոնշյալ ծրարները հանձնել է ամուսնուն, թե ոչ, կամ արդյոք հայտնել է, որ նման ծրարներ են ստացվել: Նաև չի հիշում, թե այդ ծրարները ստանալուց հետո պահպանվել են, թե ոչ[11]:

14.1. Վկա Գ.Շահբազյանի դատաքննական ցուցմունքի համաձայն՝ վերջինս չի իմացել, որ իր ամուսնու տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված է եղել, «Հայ փոստ»-ի կողմից խախտումների վերաբերյալ ամուսնուն հասցեագրված ծրարները ստացել է, սակայն չի բացել, ուղղակի վերցրել և ուղարկել է դիրքեր՝ ամուսնուն, ու հետո չգիտի, թե ծրարների հետ ինչ է եղել: Ա.Ղահրամանյանին

[10] Տե՛ս 2023 թվականի հունիսի 6-ի դատական նիստի ձայնագրությունը, հատոր 1-ին, թերթ 154:
[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 74-80:

հասցեագրված ծրարները միշտ ինքն է ստացել, քանի որ ամուսինը տանը չի լինում, սակայն արդեն գիտի, որ իրավունք չուներ ստանալու և այևս չի ստանում: Փոստատարը նամակները բերել է, ստիպել, ասել է վերցրեք ձեր նամակները, հավաստագրերի վրա իր ստորագրություններն են: Ծրարները չի բացել, վարորդների միջոցով ուղարկել է ամուսնուն, վարորդի անունը Արգամ է, սակայն վերջինը մահացել է: Իմացել է, որ ամուսինը ծրարները ստացել է, մտածել է, որ հասել է, ամուսինն էլ վճարել է տուգանքները: Ինքը տուգանքները չի վճարել: Հասկացել է, որ ծրարները ճանապարհային ոստիկանությունից են, Արգամի միջոցով է ուղարկել ծրարները, քանի որ ամուսինը ուշ-ուշ է եկել տուն՝ օրերով է ուշ եկել: Ամուսինն իրեր է տարել դիրքեր ու եղել է, որ մեկ օր մնացել է ու ետ վերադարձել: Ամուսինը ետ էր վերադառնում Երևան, այնտեղ էր աշխատում, իր մորաքրոջ աղջկա վարձակալած տանն էր մնում Երևանում լինելու դեպքում, ինքն ամուսնուն չի տեսել այդ ժամանակ[12]:

15. Վկա Ժ.Ներսիսյանի նախաքննական ցուցմունքի համաձայն՝ նամակները Ա.Ղահրամանյանի կինն է ստացել, սակայն, անպայմանորեն, առանց բացառության, նամակը տալուց առաջ կնոջը խնդրել է, որ զանգահարի Ա.Ղահրամանյանին և հայտնի, որ իր անունով նամակ է եկել: Նամակները մշտապես հանձնվել են փակ վիճակում, ուստի երբ Ա.Ղահրամանյանին զանգով հայտնվել է, որ իր անունով նամակ է եկել, միայն հայտնել են, որ ճանապարհային ոստիկանությունից է այն ուղարկվել, քանի որ բովանդակությանն ինքը չի տիրապետել[13]:

15.1. Վկա Ժ.Ներսիսյանի դատաքննական ցուցմունքի համաձայն՝ նա «Հայ փոստ»-ում աշխատել է 2007 թվականից մինչև 2021 թվականի փետրվարը: Որպես բնակիչ՝ ճանաչել է Ա.Ղահրամանյանին և նրա կնոջը՝ Գ.Շահբազյանին, նրանց նամակներ է տարել ճանապարհային ոստիկանությունից և այլ տեղերից, տեղյակ չէ նամակների բովանդակությունից, քանի որ իրավասու չէ: Նամակները ստացվել են Ա.Ղահրամանյանի և վերջինի որդու՝ Խաչիկ Ղահրամանյանի անունով: Զանգել են նրանց, հարցրել, թե վերցնելու են նամակները, թե ոչ, նրանք ասել են, որ վերցնելու են, ինքն էլ, ճանաչելով և վստահելով նրանց, փոխանցել է կնոջը, երբևէ Ա.Ղահրամանյանին չի հանձնել նամակները, քանի որ ասել են, որ նա ուշ է գալիս

[12] Տե՛ս 2023 թվականի հունիսի 6-ի դատական նիստի ձայնագրությունը, հատոր 1-ին, թերթ 154:
[13] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 96-102:

տուն, օրերով չի գալիս տուն: Իր պարտականությունն է առաքանին հանձնել հասցեատիրոջը, սակայն եթե հասցեատերը տանը չի լինում, անհրաժեշտ է պատճառ նշել, թե ինչի համար են հետ վերադարձնում: Ուստի, հաշվի առնելով, որ անձը տվյալ բնակարանում է ապրում, կապ են հաստատում, հարցնում՝ վերցնելու են նամակները, թե ոչ: Համաձայն չլինելու դեպքում՝ մերժված նշումով հետ են վերադարձնում: Այս դեպքում, կինը զանգել է Ա.Ղահրամանյանին, վերջինս կնոջն ասել է վերցրու, ինքն էլ հանձնել է կնոջը: Ըստ Հայփոստի կանոնադրության՝ այդպիսի իրավունք չունեն, բայց քանի որ հետ վերադարձնելու պատճառ չկար նշելու, քանի որ անձը տեղափոխված չէր, այդ բնակարանում էր ապրում, ինքն էլ ճանաչում էր նրանց, ստիպված են այդպես արել: Տեղյակ չէ, թե հետագայում կինը հանձնել է նամակները ամուսնուն, թե ոչ: Մեկ անգամ է եղել, որ նամակը հանձնել է Ա.Ղահրամանյանին[14]:

<u>Ստորադաս դատարանների իրավական դիրքորոշումները.</u>

16. Առաջին ատյանի դատարանը դատավճռով արձանագրել է հետևյալը. *«(…) Ելնելով վերոգրյալից՝ Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալ Արմեն Ղահրամանյանի՝ ՀՀ ոստիկանության ՀՈ ծառայության կողմից 2021 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2113599111, 2021 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2113598670, 2021 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2113597168, 2021 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 2113634617 որոշումների վերաբերյալ իրազեկված լինելու հանգամանքը ապացուցված լինելու պայմաններում նոր միայն կարող է քննարկվել փրանսպորտային միջոց վարելու համար նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:*

Անդրադառնալով վերոհիշյալ հանգամանքի ապացուցվածության հարցին՝ Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թիվ 2113599111, թիվ 2113598670, թիվ 2113597168, թիվ 2113634617 որոշումների՝ Արմեն Ղահրամանյանին ծանոթացնելու ուղղությամբ ՀՀ ոստիկանության ՀՈ ծառայության կողմից միջոցներ են ձեռնարկվել ինչպես էլեկտրոնային, այնպես էլ փոստային եղանակով:

(…)

[14] Տե՛ս 2023 թվականի հունիսի 6-ի դատական նիստի ձայնագրությունը, հատոր 1-ին, թերթ 154:

Նախաքննության ընթացքում ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքը կասեցնելու մասին ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության կողմից 2021 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2113599111, 2021 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2113598670, 2021 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2113597168, 2021 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 2113634617 որոշումները հասցեագրվել են Արմեն Ղահրամանյանին և նշված նամակները ստացվել են ստորագրությամբ:

Մեղադրյալ Արմեն Ղահրամանյանի կնոջ՝ վկա Գոհար Շահբազյանի ցուցմունքի համաձայն՝ հասցեագրված ծրարները միշտ ինքն է ստանում, քանի որ ամուսինը տանը չի լինում, հավաստագրերի վրա իր ստորագրություններն են: Ծրարները չի բացել, վարորդների միջոցով ուղարկել է ամուսնուն:

«Հայփոստ» ՓԲ ընկերության նախկին աշխատակցուհի՝ վկա Ժուլետա Ներսիսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ Արմեն Ղահրամանյանին հասցեագրված նամակներն Արմեն Ղահրամանյանի կինն է ստացել:

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանն արձանագրում է, որ Արմեն Ղահրամանյանը թիվ 2113599111, թիվ 2113598670, թիվ 2113597168 և թիվ 2113634617 որոշումների մասին փոստային եղանակով չի ծանուցվել:

Անդրադառնալով վերը նշված որոշումների մասին էլեկտրոնային եղանակով Արմեն Ղահրամանյանին ծանուցելու հանգամանքին՝ Դատարանը հարկանշական է համարում հետևյալը.

ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության հարթակից օգտվելու և էլեկտրոնային եղանակով ծանուցումների վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ 2021 թվականի հոկտեմբերի 28-ին նշված հեռախոսահամարին ուղարկվել է թվով 3 հաղորդագրություն՝ «Արմեն Խաչիկի Ղահրամանյան վարորդական վկայականը կասեցվել է» բովանդակությամբ, նույնաբովանդակ հաղորդագրություն է ուղարկվել նշված հեռախոսահամարին նաև 2021 թվականի նոյեմբերի 3-ին:

Նշվածի կապակցությամբ մեղադրյալ Արմեն Ղահրամանյանը ցուցմունք է տվել այն մասին, որ իր բջջային հեռախոսահամարին հասցեագրված կարճ (SMS) հաղորդագրություն չի ստացել, բացի այդ, հեռախոսի էկրանը կոտրված է եղել և չի կարողացել ընթերցել ստացված նամակները, պատասխանել է միայն հեռախոսազանգերին:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանն արձանագրում է, որ Արմեն Ղահրամանյանի կողմից շահագործվող բջջային հեռախոսահամարին կարճ (SMS) հաղորդագրություններ ուղարկված լինելն ինքնին չի հաստատում այդ հաղորդակցությունները նրա կողմից ընթերցելու, ըստ այդմ՝ դրանց բովանդակությանն իրազեկված լինելու հանգամանքը: Այլ փաստական տվյալներ, որոնք կարող են վկայել հակառակի մասին, սույն քրեական վարույթում առկա չեն:

Վերոհիշյալի առնչությամբ հատկանշական է, որ քրեական գործով վարույթի ընթացքում չի զննվել Արմեն Ղահրամանյանի բջջային հեռախոսը և դրանում առկա նամակագրությունը, որի արդյունքում հնարավոր կլիներ պարզել վերոհիշյալ կարճ (SMS) հաղորդագրությունները վերջինի կողմից ընթերցելու հանգամանքը: Այլ խոսքով՝ սույն դեպքում բացակայում են անհրաժեշտ և հնարավոր այն ապացույցները, որոնք համադրելով քրեական գործով վարույթի ընթացքում ձեռք բերված այլ ապացույցների հետ, հնարավոր կլիներ անհրաժեշտ խորությամբ պարզել և հիմնավորել խնդրո առարկա հանցակազմի տարր կազմող վերոհիշյալ հանգամանքը և դրանով իսկ հերքել կարճ (SMS) հաղորդագրությունները չընթերցելու վերաբերյալ Արմեն Ղահրամանյանի հայտնածը:

Ելնելով վերոգրյալից՝ Դատարանն արձանագրում է, որ քրեական գործով վարույթի ընթացքում ձեռք չի բերվել որևէ ուղղակի ապացույց, որը կարող է վկայել վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113599111, թիվ 2113598670, թիվ 2113597168 և թիվ 2113634617 որոշումների վերաբերյալ Արմեն Ղահրամանյանի իրազեկվածության մասին:

Այսպիսով՝ քրեական գործով ձեռք բերված ապացույցների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ինչպես առանձին, այնպես էլ համակցությամբ չեն հաստատում սույն քրեական գործով ապացուցման առարկան կազմող ելակետային այն հանգամանքը, ըստ որի՝ Արմեն Ղահրամանյանն իրազեկված է եղել տրանսպորտային միջոց վարելու իր իրավունքի կասեցման մասին: Այլ կերպ ասած՝ Դատարանը գտնում է, որ վերը նշված ապացույցներն իրենց բովանդակությամբ չեն ծառայում ապացուցման առարկայի մեջ մտնող հիշյալ հանգամանքը բացահայտելուն և հաստատելուն:

Ըստ այդմ, Դատարանն արձանագրում է, որ քրեական գործով ձեռք չի բերվել Արմեն Ղահրամանյանի Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի

18-ի քրեական օրենսգրքի 243.1 հոդվածի 1-ին մասով դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ (հիմնավոր) կասկածից վեր ապացուցված համարելու համար: Մեղադրյալ Արմեն Ղահրամանյանի մեղավորության վերաբերյալ մեղադրանքի կողմի հետևությունը կառուցված է ենթադրությունների, այլ ոչ թե օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա, ինչը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ, ինչն էլ իր հերթին վկայում է այն մասին, որ նման պայմաններում պետք է փաստել Արմեն Ղահրամանյանի անմեղության ապացուցված լինելը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործով ձեռք չի բերվել թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը հաղթահարելով անմեղության կանխավարկածը և բացառելով հակառակի ողջամիտ հավանականությունը՝ անաչառ դիտորդի մոտ կձևավորի «հիմնավոր կասկածից վեր» համոզվածություն հանցագործության դեպքին Արմեն Ղահրամանյանի առնչության և քրեական օրենքով չթույլատրված և նրան մեղսագրված արարքը կատարելու մեջ նրա մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ:

Հետևաբար՝ Դատարանը փաստում է, որ Արմեն Խաչիկի Ղահրամանյանին պետք է ճանաչել և հռչակել անմեղ Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 243.1 հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում՝ իրեն մեղսագրվող արարքը չկատարելու հիմքով (...)»[15]:

17. Վերաքննիչ դատարանը որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Ելնելով վերոգրյալից՝ Առաջին ատյանի դատարանն իրավացիորեն արձանագրել է, որ քրեական գործով վարույթի ընթացքում ձեռք չի բերվել որևէ ուղղակի ապացույց, որը կարող է վկայել վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2113599111, թիվ 2113598670, թիվ 2113597168 և թիվ 2113634617 որոշումների վերաբերյալ Արմեն Ղահրամանյանի իրազեկվածության մասին, որպիսի պարագայում քրեական գործով ձեռք բերված*

[15] Տե՛ս, վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 158-169:

ապացույցների բովանդակային վերլուծությունը ցույց է տվել, որ դրանք ինչպես առանձին, այնպես էլ համակցությամբ չեն հաստատում սույն քրեական գործով ապացուցման առարկան կազմող ելակետային այն հանգամանքը, ըստ որի՝ Արմեն Ղահրամանյանն իրազեկված է եղել տրանսպորտային միջոց վարելու իր իրավունքի կասեցման մասին, այսինքն, վերը նշված ապացույցներն իրենց բովանդակությամբ չեն ծառայում ապացուցման առարկայի մեջ մտնող հիշյալ հանգամանքը բացահայտելուն և հաստատելուն:

Վերոգրյալների հիմնավորմամբ Առաջին ատյանի դատարանը պատճառաբանված կերպով եկել է այն հետևության, որ քրեական գործով ձեռք չի բերվել Արմեն Ղահրամանյանին 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտելու համար համարժեք ապացույցների բավարար համակցություն, որն անհրաժեշտ է անձի մեղավորությունը ողջամիտ /հիմնավոր/ կասկածից վեր ապացուցված համարելու համար: Մեղադրյալ Արմեն Ղահրամանյանի մեղավորության վերաբերյալ մեղադրանքի կողմի հետևությունը կառուցված է ենթադրություններին, այլ ոչ թե օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա, ինչը նշանակում է, որ անձի անմեղության կանխավարկածը հաղթահարված չէ, ինչն էլ իր հերթին վկայում է այն մասին, որ նման պայմաններում պետք է փաստել Արմեն Ղահրամանյանի անմեղության ապացուցված լինելը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն քրեական գործով ձեռք չի բերվել թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը հաղթահարելով անմեղության կանխավարկածը և բացառելով հակառակի ողջամիտ հավանականությունը՝ անաչառ դիտորդի մոտ կձևավորի «հիմնավոր կասկածից վեր» համոզվածություն հանցագործության դեպքին Արմեն Ղահրամանյանի առնչության և քրեական օրենքով չթույլատրված և նրան մեղսագրված արարքը կատարելու մեջ նրա մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ:

Հետևաբար՝ Առաջին ատյանի դատարանը եկել է ճիշտ եզրահանգման, որ Արմեն Խաչիկի Ղահրամանյանին պետք է ճանաչել և հռչակել անմեղ 2003թ.

ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում՝ իրեն մեղսագրվող արարքը չկատարելու հիմքով։ (…)»[16]*։*

<u>Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

18. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավորվա՞ծ են արդյոք Արմեն Ղահրամանյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում արդարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները:

19. ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«1. Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելը՝*

(…)

6. Սույն օրենսգրքի իմաստով անձի՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը համարվում է կասեցված, եթե նրա՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցվել է, և կասեցման ժամկետը չի լրացել»։

19.1. Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքն օրենքով սահմանված կարգով լինի կասեցված, և միաժամանակ կասեցման ժամկետը չլինի լրացած:

Միևնույն ժամանակ, տրանսպորտային միջոց վարելու հանցակազմը սուբյեկտիվ կողմից պետք է դրսևորվի անձի կողմից տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը օրենքով սահմանված կարգով կասեցված լինելու փաստի գիտակցմամբ տրանսպորտային միջոցներ վարելով[17]:

---

[16] Տե՛ս, վարույթի նյութեր, հատոր 2-րդ, թերթեր 45-58:

[17] Տե՛ս, Վճռաբեկ դատարանի՝ *Արամ Մովսեսյանի* գործով 2024 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ ԵԴ/0222/01/23 որոշումը:

20. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի համաձայն՝ *«Որոշման պատճենը երեք աշխատանքային օրվա ընթացքում անձամբ հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ այն ընդունվել է, ինչպես նաև տուժողին՝ նրա խնդրանքով: Որոշումը համարվում է անձամբ հանձնված, եթե՝*

1) այն ստորագրությամբ առձեռն հանձնվել է հասցեատիրոջը, կամ հասցեատերը հրաժարվել է որոշումն ստանալուց, և առկա է որոշումը հանձնողի նշումն այդ մասին.

(…)

3) պաշտոնական էլեկտրոնային փոստ չունեցող հասցեատիրոջ գրավոր դիմումի հիման վրա այն ուղարկվել է էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության այլ (այդ թվում՝ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկելու) միջոցով, և դրանք հավաստում են պարտավոր անձի կողմից վարչական ակտի մասին ծանուցումն ստացած լինելու փաստը.

(…)

Բջջային հեռախոսահամարին հաղորդագրությամբ ծանուցման դեպքում անձը ստանում է կարճ հաղորդագրություն որոշման առկայության մասին՝ որոշման համարի կամ այլ տվյալի նշումով, որի օգտագործմամբ անձը ինտերնետային կայքի միջոցով հնարավորություն կունենա դիտելու կամ ներբեռնելու որոշումը»:

21. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու հանցակազմի սուբյեկտիվ կողմի տեսանկյունից էական նշանակություն ունի, որ անձը պատշաճ ծանուցված լինի իր նկատմամբ կայացված որոշման վերաբերյալ: Ընդ որում, անձը վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման մասին պատշաճ ծանուցված է համարվում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածում ամրագրված համապատասխան եղանակով որոշումը հանձնված համարվելու պահից՝ անկախ այն հանգամանքից՝ փաստացի ծանոթացել է որոշման բովանդակությանը, թե ոչ: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձն է կրում իրեն հասցեագրված որոշումների բովանդակությանը չծանոթանալու բացասական հետևանքը:

22. ՀՀ Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-1574 գործի քննության շրջանակներում համեմատական վերլուծության ենթարկելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, ինչպես նաև համանման հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի, մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, «Մանկության մասին» օրենքի, «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» օրենքի համապատասխան դրույթները, արձանագրել է, որ **ֆիզիկական անձին հասցեագրված դատական ծանուցագրի մասով** օրենսդրական կարգավորումները հիմնականում հանգում են նրան, որ **պատշաճ ծանուցում է համարվում ծանուցագիրն իրավահարաբերության մասնակցին կամ նրա լիազորած անձին առձեռն հանձնելը կամ նրա էլեկտրոնային փոստին համապատասխան տեղեկություն ուղարկելը:** Եվ միայն այն դեպքում, երբ ծանուցագիրն իրավահարաբերության մասնակցին կամ նրա լիազորած անձին առձեռն հանձնելը հնարավոր չէ (հասցեատերը հրաժարվել է ստանալ ծանուցագիրը, հասցեն անհայտ է, հասցե նշված չէ, բնակչության պետական ռեգիստրում մշտական բնակության վայրը նշված չէ, պատասխանողը Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունի, առկա է հասցեն որոշելու անհնարինություն), կիրառվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցագիր տեղադրելու ինստիտուտը[18]:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումը՝ ծանուցագիրը իրավահարաբերության մասնակցի լիազորած անձին առձեռն հանձնելու հնարավորության վերաբերյալ, կիրառելի է նաև վարչաիրավական հարաբերություններում, քանի որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածը նման արգելք չի նախատեսում: Բացի այդ, այդպիսի իրավական հնարավորության առկայությունը բխում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի բովանդակությունից՝ *«1. Վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է սույն հոդվածով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով:*

[18] Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի փետրվարի 2-ի թիվ ՍԴՈ-1574 որոշումը:

2. Գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով կամ պատվիրված փոստով, այդ թվում՝ սրտանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը սրտորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև հանձնման այնպիսի եղանակներով, որոնք թույլ են տալիս հաստատել հասցեատիրոջ կողմից ակտը սրտանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը:

Որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին սրտորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

Սույն մասով նախատեսված հանձնման մյուս միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ որևէ հիմնավոր պատճառով սրտորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա, այդ թվում, եթե հասցեատերն ինքը խնդրել է օգտագործել հանձնման այլ միջոցներ (...)»:

Այսպես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ որոշումը համարվում է անձամբ հանձնված, եթե այն ստորագրությամբ առձեռն հանձնվել է հասցեատիրոջը: Վճռաբեկ դատարանը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի հաշվառմամբ, արձանագրում է, որ որոշումը համարվում է անձամբ հանձնված նաև այն դեպքում, երբ այն ստորագրությամբ առձեռն հանձնվել է հասցեատիրոջ կողմից լիազորված անձին, քանի որ հասցեատերը, դրանով խնդրում է օգտագործել հանձնման այլ միջոց՝ որոշումը հանձնել իր կողմից լիազորված անձին: Ընդ որում, լիազորությունը կարող է տրվել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր, սակայն որոշումը հանձնողի համար պետք է ակնհայտ լինի որոշման հասցեատիրոջ կամքը:

23. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քրեական վարույթի համար նշանակություն ունեցող ցանկացած հանգամանք պետք է հաստատվի պատշաճ ապացույցների բավարար համակցությամբ:*

2. Եզրափակիչ դատավարական ակտը պետք է հիմնվի հետազոտված ապացույցների ազատ և բարեխիղճ գնահատման վրա:

3. Մեղադրական դատավճռի հիմքում դրվող յուրաքանչյուր փաստական հանգամանք պետք է հիմնավորվի ապացույցների այնպիսի ծավալով, որը կբացառի դրա ապացուցվածության վերաբերյալ ցանկացած հիմնավոր կասկած: Դատավճիռ կայացնելիս պետք է հաշվի առնվի անհրաժեշտ և հնարավոր ապացույցների բացակայությունը (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ապացույց ենթակա է գնահատման՝ վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ հիմնավոր եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու համար բավարարության տեսանկյունից:*

2. Քննիչը, դատախազը, դատավորը, ղեկավարվելով քրեադատավարական օրենսդրությամբ, ներառյալ ապացուցման չափանիշների մասին վերաբերելի կանոններով, ապացույցները գնահատում են դրանց պատշաճ հետազոտման և վերլուծության վրա հիմնված ներքին համոզմամբ:

3. Ոչ մի նվյալ նախապես հավաստի ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև քննիչը և դատախազը չպետք է կանխակալ վերաբերմունք դրսևորեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մյուսների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տան, քանի դեռ պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում դրանք չեն գնահատվել»:

24. Ապացույցի գնահատման չափանիշների վերաբերյալ վերոհիշյալ նորմերը վերլուծության ենթարկելիս Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է, որ.

- ապացույցների գնահատումը կատարվում է ներքին համոզման հիման վրա, ինչը՝ որպես ապացույցների գնահատման արդյունք, բնութագրվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների անխզելի կապով. այն մի կողմից պետք է բխի հետազոտվող ապացույցների բավարար համակցությունից և հիմնվի դրանց վրա, իսկ մյուս կողմից անկողմնակալ դիտորդի մոտ պետք է առաջացնի այն վստահությունը, որ ապացույցները հետազոտվել են արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Ընդ որում, թեև ապացույցները գնահատվում են ներքին համոզմունքի հիման վրա, այնուամենայնիվ, այն չի կարող կամայական լինել և պետք է բխի գործի հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունից: Այլ կերպ՝ յուրաքանչյուր գործով ապացուցման ենթակա հանգամանքները հաստատելիս

(հանցագործության դեպքը և հանգամանքները, կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին, անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ և այլն) դատարանը կրում է առկա ապացույցները բարեխիղճ գնահատման ենթարկելու պարտականություն, ինչն էլ իր հերթին պետք է արտահայտվի պատճառաբանված եզրահանգումների տեսքով[19],

- ապացույցների կամայական գնահատման արգելքը դատարաններին պարտավորեցնում է ապացուցման ենթակա հանգամանքների, այդ թվում՝ կոնկրետ հանցանքի հատկանիշների և այդ հանցանքի մեջ անձի մեղավորության վերաբերյալ իր հետևությունները հիմնավորել վերաբերելի, փոխկապակցված, հավաստի ապացույցներով և ոչ թե ենթադրություններով: Այլ խոսքով՝ հանցանքի մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի վերաբերյալ՝ ապացուցման ենթակա յուրաքանչյուր հանգամանքի կապակցությամբ դատարանի հետևությունը պետք է հիմնված լինի ոչ թե գնահատողական դատողությունների, կանխատեսումների կամ կարծիքների, այլ կոնկրետ գործով օրենքով սահմանված կարգով ձեռք բերված փաստական տվյալների վրա[20],

- «ներքին համոզմունքը», որպես սուբյեկտիվ-օբյեկտիվ կատեգորիա՝ ապացույցների գնահատումն իրականացնող սուբյեկտի գիտակցված և ողջամիտ համոզվածությունն է իր իսկ կողմից կայացված որոշման հիմնավորվածության մեջ: Այդպիսի համոզվածությունը պետք է ձևավորված լինի գործի բոլոր հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքում և հիմնվի թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների բավարար համակցությամբ հաստատված փաստերի վրա, որոնք անկողմնակալ դիտորդի մոտ ողջամտորեն կձևավորեն նույն համոզվածությունը: Ներքին համոզմունքը հիմնվում է ողջամիտ կարծիքի, գիտելիքի վրա, այլ ոչ թե ենթադրությունների, երևակայության, համակրանքի, հակակրանքի կամ կանխակալ կարծիքի վրա[21]:

---

[19] Տե՛ս, *mutatis mutandis*, Վճռաբեկ դատարանի՝ *Մակար Հովհաննիսյանի և Աշոտ Մարտիրոսյանի* գործով 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵՔՐԴ/0632/01/08, *Համլետ Դավթյանի* գործով 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ՇԴ/0126/01/12 որոշումները:

[20] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Մարգար Հակոբյանի* գործով 2013 թվականի մայիսի 8-ի թիվ ԵԿԴ/0168/01/12 որոշման 13-րդ կետը:

[21] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 31-րդ կետը:

24.1. Ապացույցների բավարարության հիմնահարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որ հավաքված ապացույցները որակական կողմից ապահովվեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը[22],

- գործի լուծման համար բավարար ապացույցներ ասելով՝ պետք է հասկանալ թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների այնպիսի համակցություն, որը, հաղթահարելով անմեղության կանխավարկածը, անաչառ դիտորդի մոտ կձևավորի հիմնավոր կասկածից վեր համոզվածություն անձի մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված որոշում[23]:

25. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ.

- Ա.Ղահրամանյանը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրվում է այն արարքի համար, որ նա, տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը վեց ամիս ժամկետով՝ 2021 թվականի հոկտեմբերի 27-ից մինչև 2022 թվականի ապրիլի 27-ը, կասեցված լինելու պայմաններում, 2022 թվականի մարտի 18-ին՝ ժամը 04:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Իսակովի պողոտայում վարել է «Օպել» մակնիշի ** ** *** հաշվառման համարանիշի ավտոմեքենան, ինչը հայտնաբերվել է տվյալ տարածքում ծառայություն իրականացնող ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Երևան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի 2-րդ վաշտի կրտսեր պարեկ Գրիգոր Ավոյանի կողմից, ինչի կապակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 8180113947 արձանագրությունը[24]:

---

[22] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Միրակ Սաքանյանի* գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 15-րդ կետը:

[23] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի* գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 33-րդ կետը:

[24] Տե՛ս, սույն որոշման 7-րդ կետը:

- Առաջին ատյանի դատարանի դատավճռով Ա.Ղահրամանյանը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 1-ին մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անմեղ և արդարացվել է՝ իրեն մեղսագրվող արարքը չկատարելու հիմքով:

Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ինչպես առանձին, այնպես էլ համակցությամբ չեն հաստատում սույն քրեական գործով ապացուցման առարկան կազմող ելակետային այն հանգամանքը, ըստ որի՝ Ա.Ղահրամանյանն իրազեկված է եղել տրանսպորտային միջոց վարելու իր իրավունքի կասեցման մասին: Մասնավորապես, Առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ Ա.Ղահրամանյանը թիվ 2113599111, 2113598670, 2113597168 և 2113634617 որոշումների մասին փոստային եղանակով չի ծանուցվել, քանի որ ըստ վկաների ցուցմունքների՝ Ա.Ղահրամանյանին հասցեագրված նամակները նրա կինն է ստացել:

Առաջին ատյանի դատարանը նաև արձանագրել է, որ Ա.Ղահրամանյանի կողմից շահագործվող բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություններ ուղարկված լինելն ինքնին չի հաստատում այդ հաղորդակցությունները նրա կողմից ընթերցելու, ըստ այդմ՝ դրանց բովանդակությանն իրազեկված լինելու հանգամանքը, հաշվի առնելով, որ վերջինս ցուցմունքով հայտնել է, որ այդպիսի հաղորդագրություն չի ստացել, բացի այդ հեռախոսի էկրանը կոտրված է եղել և չի կարողացել ընթերցել ստացված նամակները, պատասխանել է միայն հեռախոսազանգերին: Առաջին ատյանի դատարանը նաև ընդգծել է, որ քրեական վարույթի ընթացքում չի զննվել Ա.Ղահրամանյանի բջջային հեռախոսը և դրանում առկա նամակագրությունը, որի արդյունքում հնարավոր կլիներ պարզել վերոհիշյալ կարճ հաղորդագրությունները վերջինիս կողմից ընթերցելու հանգամանքը[25]:

- Վերաքննիչ դատարանը, անփոփոխ թողնելով Առաջին ատյանի դատարանի դատավճիռը, արձանագրել է, որ քրեական գործով ձեռք չի բերվել թույլատրելի, վերաբերելի և արժանահավատ ապացույցների համակցություն, որը հաղթահարելով անմեղության կանխավարկածը և բացառելով հակառակի ողջամիտ

[25] Տե՛ս, սույն որոշման 16-րդ կետը:

հավանականությունը՝ անաչառ դիտորդի մոտ կձևավորի «հիմնավոր կասկածից վեր» համոզվածություն հանցագործության դեպքին Ա.Ղահրամանյանի առնչության և քրեական օրենքով չթույլատրված և նրան մեղսագրված արարքը կատարելու մեջ նրա մեղավորության վերաբերյալ, ինչպես նաև կհաստատի գործով ապացուցման առարկան կազմող մյուս հանգամանքները և հնարավորություն կտա կայացնել հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ[26]:

26. Նախորդ կետում և սույն որոշման 8-15-րդ կետերում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով 19-24-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և վկայակոչված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանը, Ա.Ղահրամանյանին առաջադրված մեղադրանքում արդարացնելով, իսկ Վերաքննիչ դատարանը՝ արդարացման դատավճիռն անփոփոխ թողնելով՝ պատշաճ վերլուծության չեն ենթարկել և պատշաճ իրավական գնահատականի չեն արժանացրել քրեական գործում առկա փաստական տվյալները:

Ստորադաս դատարանները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ մինչ Գ.Շահբազյանի կողմից թիվ 2113599111, 2113598670, 2113597168, 2113634617 որոշումները ստանալը, Ա.Ղահրամանյանը տեղեկացել է դրանց առկայության մասին և տվել է իր համաձայնությունը, որ դրանք ստանա իր կինը:

Այսպես, ըստ գործում առկա փաստական տվյալների՝ փոստատար Ժ.Ներսիսյանն առաջարկել է Ա.Ղահրամանյանի կնոջը՝ Գ.Շահբազյանին, որ նա զանգահարի Ա.Ղահրամանյանին և հայտնի, որ իր անվամբ նամակ է ստացվել, և միայն Ա.Ղահրամանյանի համաձայնությունը ստանալով, ծրարները հանձնել է Գ.Շահբազյանին՝ Ա.Ղահրամանյանին փոխանցելու նպատակով: Այսինքն, **Գ.Շահբազյանը բանավոր կերպով Ա.Ղահրամանյանի կողմից լիազորված է եղել վերջինիս հասցեագրված ծրարները ստանալու և նրան փոխանցելու համար, որպիսի հանգամանքը հաստատում են Ա.Ղահրամանյանը և Ժ.Ներսիսյանը**: Հարկ է ընդգծել նաև այն հանգամանքը, որ **Ա.Ղահրամանյանին**

[26] Տե՛ս, սույն որոշման 17-րդ կետը:

զանգով հայտնվել է, որ նամակն ուղարկվել է ճանապարհային ոստիկանությունից[27]:

Վերոգրյալի հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն դեպքում Ա.Ղահրամանյանը խնդրել է օգտագործել վարչական ակտի հանձնման այլ միջոց՝ այն հանձնել իր կողմից լիազորված՝ համատեղ բնակվող կնոջը, որպիսի հանգամանքը չի վիճարկվում դատավարության մասնակիցների կողմից: Հետևաբար, Վճռաբեկ դատարանը հիմնավոր չի համարում ստորադաս դատարանների այն հետևությունը, որ Ա.Ղահրամանյանը պատշաճ ծանուցված չի եղել իրեն հասցեագրված թիվ 2113599111, 2113598670, 2113597168, 2113634617 որոշումների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև մեղադրյալը չի բաժանորդագրվել ճանապարհային ոստիկանության ծանուցումների էլեկտրոնային համակարգում առկա եղանակներից որևէ մեկին, սակայն նրա կողմից մշտապես շահագործվող բջջային հեռախոսահամարին ուղարկվել են կարճ հաղորդագրություններ՝ վերջինիս վարորդական իրավունքի կասեցման և տուգանային միավորները սպառվելու վերաբերյալ[28]: Ընդ որում, վարորդական իրավունքի կասեցման վերաբերյալ շուրջ երեք հաղորդագրություն ուղարկվել է 2021 թվականի հոկտեմբերի 28-ին՝ ժամը 02:10:32-ին, 02:10:34-ին, 02:10:35-ին, և նույն օրը, շուրջ 19 րոպե անց՝ ժամը 02:29:01-ին, նշված հեռախոսահամարից ելքային զանգ է կատարվել Սևան քաղաքից, ինչը վկայում է այն մասին, որ բջջային հեռախոսը շահագործվել է: Նույնաբովանդակ հաղորդագրություն է ուղարկվել 2021 թվականի նոյեմբերի 3-ին՝ ժամը 02:10:00-ին, որից հետո հեռախոսահամարին մուտքային և ելքային հեռախոսազանգեր են կատարվել շուրջ 5 ժամ անց՝ 07:22:22-ին և 07:40:00-ին, Սևան քաղաքից: Հարկ է ընդգծել, որ «Հարթակից օգտվելու և էլեկտրոնային եղանակով ծանուցումների վերաբերյալ» Ա.Ղահրամանյանի տվյալներով կատարված որոնման արտատպված տեղեկանքի զննությամբ պարզվել է, որ RK187094 վարորդական վկայականով, ***-**-**-** հեռախոսահամարով, 2021 թվականի մայիսի 30-ին կցում է կատարվել նշված հարթակին[29]:

---

[27] Տե՛ս, սույն որոշման 14.1-րդ, 14.3-րդ, 15-16-րդ կետերը:
[28] Տե՛ս, սույն որոշման 10-րդ կետը:
[29] Տե՛ս, սույն որոշման 11-12-րդ կետերը:

27. Վերոգրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ստորադաս դատարանները, Ա.Ղահրամանյանին մեղսագրվող արարքում արդարացնելով, նրա կողմից տրանսպորտային միջոց վարելու իր իրավունքի կասեցման մասին իրազեկվածության հանգամանքը որոշելիս, պատշաճ վերլուծության չեն ենթարկել գործում առկա ապացույցների համակցությունը:

28. Այսպիսով, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ա.Ղահրամանյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածով առաջադրված մեղադրանքում արդարացնելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունները հիմնավորված չեն:

29. Ամփոփելով վերոգրյալը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները Ա.Ղահրամանյանին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրվող արարքում արդարացնելով, թույլ են տվել նյութական օրենքի խախտում, ինչպես նաև պատշաճ վերլուծության և գնահատման չեն ենթարկել գործում առկա փաստական տվյալների ամբողջությունը՝ թույլ տալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ, 105-րդ հոդվածների խախտումներ, որոնք հանգեցրել են ՀՀ քրեական դատավարության օրեսգրքի 22-րդ հոդվածի խախտման, և հիմք են ստորադաս դատարանների դատական ակտերը բեկանելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ նոր քննության փոխանցելու համար:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նոր քննության ընթացքում Առաջին ատյանի դատարանը՝ հիմք ընդունելով սույն որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, պետք է քննարկման առարկա դարձնի Ա.Ղահրամանյանին առաջադրված մեղադրանքի հիմնավորվածության հարցը և հանգի համապատասխան հետևության:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ա.Ղահրամանյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու հիմքերը բացակայում են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 33-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ, 352-րդ, 359-րդ, 361-րդ, 363-րդ և 385-387-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արմեն Խաչիկի Ղահրամանյանի վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի հունիսի 6-ի դատավճիռը և այն անփոփոխ թողնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2023 թվականի նոյեմբերի 23-ի որոշումը բեկանել և վարույթը փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ նոր քննության:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ